Հավելված N 545
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ.հուլիսի 26-ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) Ֆինանսական ենթակառուցվածքների զարգացման վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետ (ծածկագիրը՝ 23-32.26-Ղ3-1)

1.2. Ենթակա և հաշվետու է

Վարչության պետը անմիջական ենթակա և հաշվետու է նախարարին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ

Վարչության պետին անմիջական ենթակա և հաշվետու են Վարչության բաժինների պետերը:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության բաժինների պետերից մեկը:

1.5. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհեր Մկրտչյան 5

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1) կազմակերպում է ֆինանսական հասանելիության և կապիտալի շուկայի խթանմանն ու զարգացմանը միտված առաջարկությունների ներկայացումը,
2) կազմակերպում է ֆոնդային շուկայի գրավչության բարձրացման ուղղությամբ աշխատանքների իրականացումը,
3) կազմակերպում է կապիտալի շուկայի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակման և դրանց իրականացման ապահովման աշխատանքները,

4) կազմակերպում է վճարահաշվարկային համակարգերի զարգացմանն ուղղված ռազմավարական փաստաթղթերի մշակման աշխատանքները,

5) կազմակերպում է ֆինանսական ենթակառուցվածքների ոլորտի կայացմանն ու սահուն զարգացմանը խոչընդոտող բոլոր առանցքային նշանակություն ունեցող խնդիրների վերհանման և լուծումների առաջադրման աշխատանքները,

6) կազմակերպում է ֆինանսական հասանելիության և կապիտալի շուկայի խթանմանն ու զարգացմանը միտված ռազմավարության մշակումը,

7) կազմակերպում է կապիտալի շուկայի մասնակիցների համար ֆինանսական գրագիտության բարձրացման միջոցառումների իրականացումը.

8) կազմակերպում է ոլորտը կարգավորող առկա օրենսդրական կարգավորումների բարեփոխման ուղղությամբ առաջարկությունների ներկայացումը,

9) կազմակերպում է պետական կառավարման շահագրգիռ մարմինների հետ համատեղ ոլորտի զարգացմանը ուղղված միջազգային ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքներ՝ իր իրավասությունների շրջանակներում:

Իրավունքները՝

- պետական կառավարման համակարգի մարմիններից և այլ կառույցներից **պահանջել** ոլորտային առաջարկություններ, հիմնավորումներ, փաստաթղթեր և այլ նյութեր.
- պետական կառավարման համակարգի մարմիններից և այլ կառույցներից **պահանջել** իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ մասնագիտական կարծիքներ, առաջարկություններ և եզրակացություններ.
- Հայաստանի Հանրապետությունում ոլորտային զարգացման ծրագրեր իրականացնող օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցչությունների հետ կազմակերպել աշխատանքային քննարկումներ համագործակցության առանձին ուղղությունների վերաբերյալ.
- Նախարարության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներից պահանջել և ստանալ տեղեկություններ, ոլորտային առաջարկություններ,
- կազմակերպել խորհրդակցություններ, հանդիպումներ և քննարկումներ ոլորտային առաջարկումների վերաբերյալ,
- **ներգրավվել պետական կառավարման շահագրգիռ մարմինների հետ համատեղ ոլորտի զարգացմանը ուղղված միջազգային ծրագրերի մշակման և իրականացման նպատակով ձևավորված աշխատանքային խմբերի կազմում:**

Պարտականությունները՝

- ամփոփել պետական կառավարման համակարգի մարմիններից և այլ կառույցներից ստացված ոլորտային առաջարկությունները, հիմնավորումները և այլ նյութերը.

- ուսումնասիրել ֆինանսական հասանելիության և կապիտալի շուկայի ախտորոշիչ վերլուծության արդյունքները և առաջարկություններ ներկայացնել դրանց խթանման և զարգացման վերաբերյալ,
- ամփոփել և ներկայացնել առաջարկություններ ուղղված ոլորտը կարգավորող օրենսդրության բարելավմանը.
- վերահսկել կապիտալի շուկայի զարգացման և ծրագրերի ու դրանց վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների մշակման, իրականացման համակարգման աշխատանքները.
- հետևել վճարահաշվարկային համակարգերի զարգացմանն ուղղված ռազմավարական փաթեթների նախապատրաստման աշխատանքներին՝ իրավապայմանագրային դաշտ, աջակցության ծրագրեր, ոլորտային համագործակցություն, առաջարկություններ ըստ առանձին ոլորտների և այլն.
- ուսումնասիրել ֆինանսական ենթակառուցվածքների ոլորտի զարգացման միտումների, առկա իրավիճակի վերաբերյալ տեղեկատվության վերլուծությունը, ամփոփել և ներկայացնել առաջարկություններ ըստ առանձին ոլորտների,
- հետևել ֆինանսական ռեսուրսների հասանելիության բարձրացման և կապիտալի շուկայի բարելավմանն ուղղված քաղաքականության իրագործմանը ուղղված նորարարական ֆինանսական մեխանիզմների ներդրման և դիտանցման աշխատանքների իրականացմանը,
- վերահսկել ոլորտի քաղաքականության մշակման և ռազմավարական ծրագրերի իրականացման աշխատանքներ.
- հետևել և վերահսկել կապիտալի շուկայի մասնակիցների համար ֆինանսական գրագիտության բարձրացման միջոցառումների իրականացման աշխատանքներին.
- ուսումնասիրել և ամփոփել գլոբալ մարտահրավերներին համապատասխան երկարաժամկետ ոլորտային զարգացման ծրագրերի, ֆինանսական հասանելիության և կապիտալի շուկայի զարգացման մեխանիզմների և կարգավորումների մշակման և ներդրման աշխատանքները և ներկայացնել առաջարկություններ
- ուսումնասիրել և ամփոփել միջազգային գնահատումների ու զեկույցների ուսումնասիրությունների արդյունքները և ներկայացնել առաջարկություններ ոլորտը կարգավորող օրենսդրական կարգավորումների բարեփոխման վերաբերյալ,
- իր իրավասությունների շրջանակներում ներկայացնում է առաջարկություններ, դիտարկումներ, կարծիքներ, անհրաժեշտ տեղեկատվություն պետական կառավարման շահագրգիռ մարմինների հետ համատեղ ոլորտի զարգացմանը ուղղված միջազգային ծրագրերի մշակման և իրականացման գործընթացներում:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում կամ ֆինանսավարկային բնագավառներում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ.

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Փոփոխությունների կառավարում
2. Ժամանակի կառավարում
3. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
4. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
5. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի մեկ ոլորտի համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի մեկ ոլորտի համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի մեկ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության վրա ազդեցություն և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց և մարմինների վրա ազդեցություն, և ազդեցությունը սահմանափակվում է համապետական մակարդակով որոշակի ոլորտով:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը և մարմինը:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման խնդիրները և դրանց տալիս լուծումներ: